## «ԱՐԱՐԱՏ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Թիֆլիսի Հայոց Հոգևոր երկսեռ ուսումնարանների Հոգաբարձութիւնս պատիւ ունի ուղարկել 1884 թ. միամեայ տնտեսական համառօտ հաշիւը, որ քաղուած է Թեմական վերատեսչի ձեռքով ժապաւինեալ մատեանից և կարգացուած ներկայ տարուայ Սուրբ Վարդանանց հանդիսին ժողովրդեան խուռն բազմութեան ներկայութեամբ, ուստի խոնարհաբար խնդրում է Ձեզ զետեղել այն «Արարատ» ամսագրի մէջ ի գիտութիւն հայ—հասարակութեան և ի միամտութիւն մանաւանդ նոցա, որոնք գործին ի մօտոյ տեղեակ չլինելով «Նոր—Դար»-ի միջոցով ճգնում են արատաւորել մեր գործունէութիւնը, մոլորեցնելով միևնոյն ժամանակ յիշեալ լրագրի թէ ընթերցողներին և թէ նորա մեծ. Խմբագրին. Մեզ համար բաւական է և կատարելապէս վարձատրուած ենք համարում մեզ, որ տեղիս հասարակութիւնը, և հոգևոր վարչութիւնը մեզ հետ է և համակրումէ մեր գործունէութեանց յօգուտ Թիֆլիսի Հոգևոր դպրոցների.—

| Համառօտ ցուցակ մտից Հոգևոր երկսեռ ուսումնարանաց Հայոց Թիֆլիսի, քաղեալ ի ժապաւինեալ մատենէ ի 1884 ամի. | Ր. | Կ. |
|---|---|---|
| Ի կրպակէ մոմավաճառութեան եմուտ յօգուտ ուսումնարանաց | 929 | 53 |
| Թոշակագրամք յօրիորդաց եմուտ յընթացս 1884 ամի . . | 879 | 80 |
| Վարձ ուսումնարանապատկան տանց և կրպակաց . . | 176 | 50 |
| Յերկուց եկեղեցեաց սահմանեալ ի հոգևոր իշխանութենէ . | 180 | |
| Յուխտատեղեաց . . . . . . . | 89 | 89 |
| Վարձ թատրոնական բեմի . . . . . | 60 | |
| Մուտք ի թատրոնական ներկայացմանէ . . . | 90 | 50 |
| Նուիրեալ դրամք ի մեռելատեարց . . . . | 55 | |
| Նուիրեալ դրամ ի դրամատանէ Թիֆլիսի . . . | 50 | |
| Ի վիճակախաղէ . . . . . . . | 212 | 82 |
| Ուսման վարձ ի մանկանց . . . . . | 136 | |
| Գումարն է . | 2860 | 4 |
| 1883 թուից մնացած մայր գումարն է . . . . | 1308 | 74 |
| Ընդհանուր գումարն է. | 4168 | 80 |

| Համառօտ ցուցակ ելից Հոգևոր երկսեռ ուսումնարանաց Հայոց Թիֆլիսի քաղեալ ի ժապաւինեալ մատենէ ի 1884 ամի. | Ր. | Կ. |
|---|---|---|
| Ռոճիկ ուսուցչաց . . . . . . . | 1920 | |
| Ռոճիկ ծառայից և մոմավաճառի . . . . | 210 | |
| Վասն փայտից երկուց ուսումնարանաց . . . . | 67 | 20 |
| Ի վերայ նորոգութեան երկուց ուսումնարանաց . . . | 150 | 85 |
| Վասն ձեռագործաց օրիորդաց թելից և այլ իրեղինաց . . | 74 | 6 |
| Գնեալ նստարանաց և գրատախտակաց . . . | 38 | |
| Ռոճիկ Թեմական վերատեսչի փոստայի ծախսք . . | 50 | 32 |
| Առաքեցաւ ի կոնսիստօրն վասն ճանապարհածախուց Նահանգական դատարանի (ОКРУЖНЫЙ СУДЪ) Անդամոց, ի մասին տեղական քննութեան ուսումնարանապատկան այգեաց և վարելահողոց գտելոց ի գիւղն Փաշաան հանդերձ փոստայի ծախիւք. . | 101 | 34 |

| | | |
|---|---|---|
| Հարկ արքունական գնահատութեան ուսումնարանապատկան տանց և այգեաց . . . . . . . . . . | 20 | 90 |
| Մանր ծախք ապակեա լուսամոից, յատակաց նորոգութեան և այլոց . . . . . . . . . . | 107 | 30 |
| Տուաւ փասն ածելոյ դեղին մոմս տասն և մի փութ . . | 23 | 85 |
| Գնեցաւ մի փութ պատրոյգ յԱրիւլէ Մատիկեանց . . | 13 | |
| Գումարն է . | 2776 | 82 |

Ծ—Նօթ. Երկսեռ ուսումնարաններն 1884 թ. ծախք՝ երկու հազար եօթը հարիւր եօթանասուն և վեց (2776) ռուբլի, ութսուն և երկու (82) կոպէկ դուրս գալով ընդհանուր գումար՝ չորս հազար հարիւր վաթսուն և ութ (4168) ռուբլի, ութսուն (80) կոպէկից՝ մնում է Հոգաբարձութեան մօտ առ մէկն Յունվարի 1885 ամի մի հազար երեք հարիւր իննսուն և մի (1391) ռուբլի, իննսուն և ութ (98) կոպէկ։ — Պէտք չէ մոռանալ այն, որ Հոգաբարձութիւնս 1884 թ. ընթացքում ունեցել է շատ անախնկալ ծախսեր, ինչպէս ներկայ հաշուի ծախքի տակ №№ 6 և 8 բոլորովին անակնունելի են եղել և յետագայ տարիներին չի կարող լինել։

Նախախագահ Հոգաբարձութեան՝ ԳԷՈՐԳ ԱԻԱԳ Ք. Տ. ՍԱՐԳՍԵԱՆ

Քարտուղար՝ ԵՐՈՒԱՆԴ ԱՊՐԻԼԵԱՆ.

---

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Արարատի հրաւէրքին մտ դնելով, Մոսկուայի Հայ ուսանողների մանկական գրքերի հրատարակութիւնը հաճեցաւ իւր հրատարակութիւնները ուղարկել Մայր Աթոռոյս և Ճեմարանի գրադարաններին։

Շնորհակալութիւն։

—

Շնորհակալութեամբ ստացանք

«ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ» հեղինակութիւն Ս. Վարշամեան, գինն է մի ռուբլի։

—

## ՎՐԻՊԱԿ.

Այս ամսագրոյ մի քանի օրինակների մէջ 162 և 169 երես ի բաց թողուած են հետևեալ անունները. Անդամ Սինոդի Գեր. Ներսէս Եպիսկոպոս Խուդավերտեան, Պ. Աղէքսանդր Լալայեան՝ պատգամաւոր Թեմին Շամախւոյ և Պ. Աղէքսանդր Ղազազեան՝ պատգամաւոր Կարուց։